



Մեպտեմբերի 30, 2021թ.

## Կարծիք

### Սուրեն Պապիկյանն ընդդեմ Yerevan.today լրատվական կայքի դատական գործի կապակցությամբ

#### Գործի հանգամանքները

Սույն թվականի հունիսի 17-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը ներկայացրել է հայցադիմում Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ [Yerevan.today](http://www.yerevan.today) լրատվական կայքի հիմնադիր «Մեդիա Պլուս» ՍՊԸ-ի՝ խնդրելով դատարանին պարտավորեցնել պատասխանողին հերքել այդ կայքում հունիսի 11-ին հրապարակված [«Հայաստանի նոր միլիոնատերերը. Պապիկյանը 3 տարում ասֆալտի վրա դարձել է դոլարային միլիոնատեր»](#) հոդվածում տեղ գտած զրպարտող բնույթի արտահայտությունները:

2020 թվականի օգոստոսի 24-ին Սուրեն Պապիկյանը նաև հայցադիմում էր ներկայացրել նույն դատարան՝ ընդդեմ Hzh.am լրատվական կայքի հիմնադիր «Աննա Գևորգյան» ԱԶ-ի՝ խնդրելով պարտավորեցնել պատասխանողին հերքել այդ կայքում մայիսի 15-ին հրապարակված [«ԲՊ-ականները հետաքրքրված են անշարժ գույքի շուկայով»](#) հոդվածում տեղ գտած զրպարտող բնույթի արտահայտությունները:

Երկու գործերով էլ հայցվորն անձամբ մինչև դատարան դիմելը վեճը արտադատական կարգով լուծելու միջոցներ չի ձեռնարկել, մասնավորապես, չի ներկայացրել հերքման կամ պատասխանի իրավունքով հանդես գալու պահանջներ: Փոխարենը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է պաշտոնապես դիմել «Մեդիա Պլուս» ՍՊ ընկերությանը՝ հոդվածում տեղ գտած զրպարտող բնույթի արտահայտությունները հերքելու պահանջով, որը մերժվել է: Երկու գործերով էլ դատական վարույթներն ընթացքի մեջ են:

## Եզրակացություն

Նախ՝ Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել, որ անթույլատրելի է, երբ պետական մարմինը պաշտոնատար անձի փոխարեն հերքման պահանջ է ներկայացնում լրատվամիջոցին: Քաղաքացիաիրավական վեճը մասնավոր իրավահարաբերության առարկա է, և պետական մարմինը չի կարող ներգրավվել որպես կողմ այս գործընթացում: Դա անթույլատրելի է նաև տեղեկություններ ու գաղափարներ տարածելու ազատության իրավունքի տեսանկյունից. պետական մարմնի ներգրավումը վարչական ռեսուրսի օգտագործում է, որի պայմաններում լրատվամիջոցը հայտնվում է անհավասար պայմաններում:

Սահմանադրական դատարանն այս հարցին անդրադարձել է դեռ 2011 թվականին՝ նշելով, որ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի՝ ազատորեն արտահայտվելու, այդ թվում սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կարևոր երաշխիք են դիտում **պետական մարմինների միջամտության բացառումը**<sup>1</sup>: Այսպիսով, վիրավորանքին և զրպարտությանը վերաբերող դատական գործերով պետական մարմնի միջամտության բացառումը սահմանադրաիրավական երաշխիք է, և դրան անհրաժեշտ է անշեղորեն հետևել:

Ինչ վերաբերում է հողվածների բովանդակությանը, ապա կասկածից վեր է, որ հեղինակներն արժարձել են հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաներ: Ժողովրդավարության պայմաններում լրատվամիջոցները պետք է հնարավորություն ունենան անկաշկանդ հրապարակել պաշտոնատար անձանց և պետական մարմինների կողմից հանրային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ հողվածներ, խթանել բաց բանավեճեր և, այդպիսով, իրականացնել հանրային «պահապան շան» իրենց գործառույթը: Այդուհանդերձ, այս գործառույթը չի երաշխավորում արտահայտվելու անսահմանափակ ազատություն նույնիսկ այն հրապարակումների առնչությամբ, որոնք նվիրված են հանրային մեծ հետաքրքրություն ներկայացնող թեմաներին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ Եվրոպական դատարանի մեկնաբանության՝ արտահայտվելու ազատությունն իրացնելիս «պարտավորությունները և պատասխանատվությունը» ենթադրում են, որ ընդհանուր հետաքրքրության խնդիրների մասին տեղեկություններ հայտնելու կապակցությամբ լրագրողներին 10-րդ հոդվածով տրամադրվող պաշտպանությունը ենթակա է այն նախապայմանին,

<sup>1</sup> ՄԴՈ-997 որոշում: Կետ 6

որ «լրագրողները գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու համար ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն՝ լրագրողական էթիկայի նորմերին համապատասխան»<sup>2</sup>: ՄԻԵԴ-ի այս դիրքորոշումը արտահայտված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում, համաձայն որի՝ փաստացի տվյալները հրապարակելը գրապարտություն չէ, եթե «դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները»:

Առաջնորդվելով վերը նշված նորմով՝ Խորհուրդը նկատում է, որ, ինչպես նշվեց վերևում, երկու հոդվածներում էլ հեղինակներն անդրադարձել են ընդհանուր նշանակության խնդիրների և երկու հոդվածներում էլ վիճահարույց արտահայտությունները պարունակում են փաստացի տվյալների մասին պնդումներ: Հետևաբար, հարցի լուծումը նրանում է, թե արդյո՞ք այդ տվյալները ստացվել և հրապարակվել են բարեխղճորեն, այլ կերպ ասած՝ արդյո՞ք հեղինակները ողջամտության սահմաններում ձեռնարկել են միջոցներ՝ պարզելու հրապարակված տվյալների, փաստեր պարունակող հայտարարությունների ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև՝ թե արդյո՞ք հավասարակշռված ու բարեխղճորեն են ներկայացվել այդ տվյալները: Այս հարցին պատասխանելիս Խորհուրդը հաշվի է առնում կոնկրետ հոդվածն իր ամբողջության մեջ՝ առանձին հայտարարությունների բովանդակությունը, դրանք մատուցելու եղանակը, ողջ համատեքստը՝ այդ թվում նաև ֆորմատը, արտահայտչամիջոցները և այլ հատկանիշներ:

Առաջին հոդվածում հեղինակը ներկայացրել է, որ կառավարությունը «Կոքս քնսալթ» ընկերության հետ կնքել է մի շարք գործարքներ՝ այդ թվում նաև մեկ անձից գնման ընթացակարգով, և որ վերը նշված ընկերությունը, ըստ պայմանագրի, իրականացնելու էր նաև տեխնիկական հսկողություն 143.45 կմ երկարությամբ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների շինարարության որակի նկատմամբ, և այդ ծառայության համար սահմանված վճարը պայմանագրի գումարի 5 տոկոսն էր: Այս փաստացի տվյալները հեղինակը հիմնավորել է հոդվածին կից հրապարակված փաստաթղթերով, որոնք նա վերցրել է բաց աղբյուրներից: Բացառություն է միայն 5 տոկոսի վերաբերյալ պնդումը, որը, սակայն, հեղինակը հիմնավորել է «դեռևս 2019 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս. Պապիկյանի կողմից տեխնիկական հսկողության համար սահմանված 5%-ը» արտահայտությամբ, բայց

<sup>2</sup> Bladet Tromsø-ն և Stensaas-ը ընդդեմ Նորվեգիայի, 1999թ. մայիսի 20-ի վճիռ, կետ 62

այն կոնկրետ հղում չունի աղբյուրին, թե որտեղ է ասվել 5%-ի մասին կամ որտեղ է դա արձանագրվել: Ներկայացված փաստական տվյալներից հեղինակն այնուհետև բխեցրել է եզրահանգում, որ «իշխանությունը ճանապարհներ է ասֆալտ արել ոչ թե նրա համար, որ բնակչությունը լավ ճանապարհներով երթնեկի, այլ որ Սուրեն Պապիկյանը և այլոք փող աշխատեն» ու որ «Պապիկյան Սուրենը արդեն 2020 թվականին դարձել է դոլարային միլիոնատեր», որոնք էլ դարձել են սույն դատական վեճի առարկա: Խորհուրդը նկատում է, որ նման եզրահանգման համար որևէ փաստական տվյալ, փաստաթուղթ, հետազոտություն կամ որևէ այլ տեսակի աղբյուր չի վկայակոչվել: Դա բացառապես հեղինակի կարծիքն էր: Հարցը, թե որքանով էր իրավաչափ նման եզրահանգում կատարելը ներկայացված փաստերի շրջանակում, կախված կլինի նրանից, թե որքանով հեղինակը կկարողանա դատարանում հիմնավորել իր կողմից ներկայացված փաստերի և եզրահանգման միջև ռացիոնալ կապը: Մինչդեռ՝ Խորհուրդը գտնում է, որ հեղինակը բավարար ջանքեր չի կիրառել այդ կապը առարկայական ներկայացնելու համար, որը կբավարարեր վերը նշված իրավական և էթիկական պահանջներին:

Ինչ վերաբերում է երկրորդ հրապարակմանը, ապա այն, ի տարբերություն առաջինի, աչքի է ընկնում հակիրճ բովանդակությամբ, տեղեկատվության աղբյուրների բացակայությամբ և վերացական եզրահանգումներով: Հեղինակը, ըստ երևույթի, օգտվելով գաղտնի աղբյուրի պաշտպանված լինելու հանգամանքից՝ նախընտրել է չբացահայտել այդ աղբյուրը, որից Խորհուրդը եզրահանգում է, որ լրագրողը նախընտրել է փաստերի ապացուցման բեռը վերցնել իր վրա:

Աղբյուրների գաղտնիությունը լրագրողական ազատության կարևոր երաշխիք է, և այն անհրաժեշտ է պաշտպանել: Այդուհանդերձ, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ կետը լրագրողին չի ազատում գաղտնի աղբյուրից օգտվելով փաստացի տվյալներ հրապարակելիս զրպարտության համար պատասխանատվությունից: Հետևաբար, վճռորոշ նշանակություն ունեն վերը նշված օրենսդրական սկզբունքները, այն է՝ արդյո՞ք տվյալները ձեռք են բերվել և հրապարակվել են բարեխղճորեն, արդյո՞ք հեղինակները ողջամտության սահմաններում ձեռնարկել են միջոցներ՝ պարզելու հրապարակված տվյալների, փաստեր պարունակող հայտարարությունների ճշմարտացիությունը և հիմնավորվածությունը, արդյո՞ք հավասարակշռված ու բարեխղճորեն են ներկայացվել այդ տվյալները:

Խորհուրդը չի գտնում, որ այս հրապարակումը պատրաստելիս օրենքի վերոնշյալ պահանջները ապահովվել են: Այն ամբողջությամբ կազմված է վերացական պնդումներից: Աղբյուրները նույնպես վկայակոչված են վերացական կերպով: Հրապարակման մեջ բացակայում են փաստերի, տվյալների, իրադարձությունների որևէ համադրություն և վերլուծություն: Վերջին պարբերությունում, որը վերաբերում է հայցվորին, թեև հեղինակը հղում է կատարել գաղտնի աղբյուրի վրա, սակայն

լրագրողական բարեխղճությունը հուշում է, որ ցանկացած տեղեկություն, հատկապես, եթե դա անձնական կյանքի կամ արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքի լուրջ և խորը միջամտություն է, որը նույնիսկ կարող է հանգեցնել անձի քրեական հետապնդմանը, հարկ է, որ ստուգվի առնվազն մեկից ավելի աղբյուրներով: Այս մոտեցումը պայմանավորված է նաև «ողջամիտ հրապարակում» պաշտպանական սկզբունքով, համաձայն որի՝ օրենքը պետք է պաշտպանության տակ վերցնի լրագրողին նույնիսկ այն դեպքում, երբ հողվածում տեղ են գտել ոչ ստույգ և զրպարտող բնույթի տվյալներ, բայց նա հողվածը պատրաստել է բարեխղճորեն, և տվյալ հանգամանքում առկա էր նյութը տարածելու հրատապություն, որի պայմաններում հապաղելը կարող էր առարկայագուրկ դարձնել հասարակության՝ կարևոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը<sup>3</sup>: Սակայն նույնիսկ այս տեսանկյունից հարցին մոտենալիս Խորհուրդը գտնում է, որ ոչինչ չէր հուշում, որ հողվածում ներկայացված իրադարձություններն ունեին մեծ հրատապություն, և անհրաժեշտ էր այդ տեղեկությունները տարածել այնպես, ինչպես դա արվել է, և որ փաստերի լրացուցիչ ստուգումը կարող էր բացասաբար անդրադառնալ հանրության տեղեկացված լինելու իրավունքի վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ նշված երկու հողվածներում հեղինակները ողջամիտ բավարար միջոցներ չեն ձեռնարկել պարզելու վիճահարույց տվյալների ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև այդ տվյալները չեն ներկայացրել հավասարակշռված և բարեխղճորեն՝ ի խախտումն Քաբացիական օրենսգրքի 1087.1 հողվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջների:

## **Տեղեկատվական վեճերի խորհուրդ**

**Շուշան Դոյրոյան** (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

**Արա Ղազարյան** - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

**Բորիս Նավասարդյան** - Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան** - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Աշոտ Մելիքյան** - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

**Օլգա Սաֆարյան** - Փաստաբան

**Դավիթ Սանդուխյան** - Փաստաբան

---

<sup>3</sup> Զրպարտության սահմանումը. արտահայտվելու ազատության և արժանապատվության պաշտպանության սկզբունքները: Միջազգային չափանիշների շարք: ԱՄՏԻԿԼ 19: Տե՛ս սկզբունք 9. ողջամիտ հրապարակում: Հասանելի է հետևյալ հղումով. <https://www.article19.org/wp-content/uploads/2018/02/defining-defamation.pdf>